Судебно-медицинский эксперт имеет предусмотренное законом процессуальное положение. Это процессуальное положение ограничивается его участием в таком качестве в экспертной оценке объекта, формулировании экспертных выводов и в допросе эксперта. Между тем, такое участие в полном объеме осуществляет и несет ответственность за организацию работы экспертной комиссии работник экспертной организации. Исключительно о процессуальном положении судебно-медицинских экспертов можно было бы говорить, если бы все члены экспертной комиссии являлись судебно-медицинскими экспертами по профессии, специальности и должности. Но привлекаемые к участию в экспертной комиссии врачи-клиницисты не работают судебно-медицинскими экспертами, не имеют экспертного стажа и излагают в своих выводах не более чем врачебную оценку исследуемых фактов.

Кроме того, если судебно-медицинский эксперт в процессуальном положении недоступен (кроме процессуальных же правонарушений) наступлению ответственности, то в материально-правовом – доступен. Например, к нему в качестве работника экспертной организации могут быть применены меры дисциплинарной ответственности. В отличие от судебно-медицинских экспертов по профессии, специальности и должности, на остальных членов экспертной комиссии (клиницистов) может быть возложена имущественная ответственность в порядке регресса, поскольку и они как практические врачи не избавлены от возможности причинения вреда здоровью пациентов. Тем самым материально-правовое и процессуальное положение членов экспертной комиссии различается [1].

Отличия между профессиональными судебно-медицинскими экспертами и привлекаемыми в качестве членов экспертной комиссии клиницистами значимы для судебного рассмотрения гражданских дел о причинении вреда здоровью при оказании медицинских услуг. Чтобы

исключить влияние цеховой солидарности, по этой категории дел целесообразно максимально отстранять от участия в комиссионной экспертизе клиницистов, включая в ее состав исключительно профессиональных судебно-медицинских экспертов.

В делах о нарушении прав потребителя, тем более о причинении вреда здоровью, тем более при оказании медицинских услуг презумпция вины причинителя имеет особое значение. Презумпция вины причинителя по такого рода делам должна стать принципом судебно-медицинской экспертизы. Это означает, что судебно-медицинской экспертизе по гражданским делам о причинении вреда здоровью при оказании медицинских услуг следует исходить из его обусловленности действиями причинителя до тех пор, пока ею не доказано иное происхождение вреда [2].

Медицинскими показателями обоснованности выводов судебно-медицинской экспертизы по гражданским делам о причинении вреда здоровью при оказании медицинских услуг являются: непротиворечие экспертных выводов правилам медицинской профессии, прочность оснований, однозначность в пределах объекта исследования.

Правовыми показателями обоснованности выводов судебно-медицинской экспертизы по гражданским делам о причинении вреда здоровью при оказании медицинских услуг являются: соответствие предмету доказывания и применимой норме права, доступность экспертных выводов юридической интерпретации, непротиворечивость.

Критериями обобщенной оценки судом выводов судебно-медицинской экспертизы по делам о причинении вреда здоровью при оказании медицинских услуг являются: их соответствие экспертному заданию, ясность обоснования, пригодность для правоприменительных выводов [2].

Единый алгоритм использования судом судебно-медицинской экспертизы по делам о причинении вреда здоровью при оказании медицинских услуг состоит в следующей общей последовательности: анализ искового заявления – предварительный выбор применимой нормы права – определение предмета доказывания – формулирование экспертного задания – анализ медицинской обоснованности заключения судебно-медицинской экспертизы по делу – анализ правовой обоснованности заключения судебно-медицинской экспертизы по делу – формулирование правоприменительных выводов.

Поступила 18.04.12

Քաղաքացիական գործերով դատաբժշկական փորձաքննության եզրակացությունների գնահատում: Իրավական հարցեր

Ե.Խ. Բարինով, Պ.Օ. Ռոմոդանովսկի, Մ.Ս. Բիշարյան

Հոդվածում քննարկվում են քաղաքացիական գործերով հանձնաժողովային փորձաքննությունների հետ կապված հարցերը, որտեղ դիտարկվում են բժշկական ծառայություններ մատուցելու ժամանակ առողջությանը վնաս պատճառելու դեպքերի հարցերը, բերվում է դատական պրոցեսի ընթացքում դատաբժշկական փորձաքննության եզրակացության դատաիրավական և իրավական նշանակությունը, տրվում է քաղաքացիական գործերով դատաբժշկական փորձաքննության հետևությունների իրավական գնահատականը:

Ներկայացված է դատարանի կողմից քաղաքացիական գործերով դատաբժշկական փորձաքննության կիրառման ակտիվիտետ, որը վերաբերվում է բժշկական ծառայություններ մատուցելու ժամանակ առողջությանը վնաս պատճառելու դեպքերի գործերին:

Evaluation of the forensic medical examination findings in civil cases. Legal issues

Ye. Kh. Barinov, P.O. Romodanovski, M.S. Bisharyan

The article deals with questions related to the commission expertise for civil cases, where there are considered the questions concerning cases of injury to health by providing medical services, the process-legal significance of the conclusion of the forensic medical examination in the trial, is underlined, the legal assessment of the findings of forensic expertise in civil cases is conducted.

We present an algorithm used by the court for forensic medical examination in cases of causing harm to the health during the provision of medical services.

Литература

1. *Пашипян Г.А., Родин О.В., Тихомиров А.В.* Возможности совершенствования нормативно-правовой базы и механизмов защиты прав пациентов в РФ при текущей социально-экономической и политической ситуации. Медицинская экспертиза и право, 2009, 1, с.24-26.

2. *Пашинян Г.А., Родин О.В., Тихомиров А.В.* Пути совершенствования правовой обоснованности выводов судебно-медицинских экспертиз по гражданским делам о причинении вреда здоровью при оказании медицинских услуг. Медицинская экспертиза и право, 2009, 2, с.22-28.
3. *Родин О.В., Пашинян Г.А., Тихомиров А.В.* Потребности правовой процедуры в связи с необходимостью проведения судебно-медицинской экспертизы. Главный врач: хозяйство и право, 2009, 2, с.38-43.
4. *Россинская Е.Р.* Специальные юридические знания и судебно-нормативные экспертизы . Argumentum ad iudicium ВЮЗИ–МЮИ–МГЮА, труды, т.2, М., 2006.

Ռազմական բժշկի աշխարհայացքային ընկալումների գնահատումը և դրանց զարգացման տեսության ուղղությունները

Ռ. Գ. Խաչատրյան

*Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան,
0025, Երևան, Կորյունի փ., 2*

Բանալի բառեր. ռազմական բժիշկ, գաղափարախոսություն, աշխարհայացք, մարդասիրություն, բարոյական կողմնորոշումներ, բուժսպասարկում, բուժկանխարգելիչ գործունեություն, մարտական պատրաստություն, ռազմական կրթություն, ռազմաարհեստավարժ գիտելիքներ

Ռազմական բժշկի աշխարհայացքի ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է ռազմական բժիշկ-մասնագետների գործունեության սուբյեկտիվ հիմքերի կարևորությամբ: Արդի ժամանակաշրջանում մարդկությունը, կարելի է ասել, հիասթափվեց երկու առանցքային աշխարհայացքային գաղափարներից. նախ՝ հավատը դեպի գիտության և տեխնիկայի ամենակարողությանը, երկրորդը՝ մարդկանց մեծամասնության համար արդար հասարակարգի կառուցման անհնարինությունը: Այստեղից էլ անհրաժեշտություն է առաջանում կանոնավորել գաղափարները, արժեքները, սկզբունքները, մարդու կյանքի իմաստային կողմերը, որոնք կարող են հանգեցնել սուբյեկտի բավականին հստակ ուրվագծված կործանման սպառնալիքին՝ պայմանավորված նաև ժամանակակից տարաբնույթ մարտահրավերներով: Այդ նպատակով արդի պայմաններում գոյատևման նոր աշխարհայացքային հարացույցի կարիք է զգացվում, որտեղ մեծ մասամբ տեղ կհատկացվի բժշկությանը և բժիշկ-մասնագետներին՝ մարդկության ֆիզիկական առողջության ապահովության գերակա արժեքայնությամբ:

Տվյալ համատեքստում ռազմական բժիշկների աշխարհայացքի հետազոտության արդիականությունը բխում է զինծառայողների մոտ առաջացած և կայուն տեղ գտած աշխարհայացքային անհարմարավետությունից (դիսկոմֆորտից), որի հիմքում վերջին տարիների հասա-

րակական գործընթացների շարքում կարելի է ընդգծել զինծառայողի սոցիալական կարգավիճակի որոշակի բարդությունները, ռազմական բարեփոխումների անցկացման հետ կապված դժվարությունները, արժեքների հեռանկարային համակարգի փոփոխությունները: Կարելի է փաստել սակավաթիվ հանդիպող այն իրողությունը, որ քաղաքացին ընտրում է ռազմական բժշկի մասնագիտությունը, ստանում պետության կողմից երաշխավորված բարձրագույն կրթություն, անցնում ծառայության /մասնագիտական գործունեության/ առանց որևէ մտահոգության՝ ուսումը ստանալուց հետո աշխատանքի բացակայության խնդրի վերաբերյալ, և արդյունքում մի որոշակի ժամանակ անցնելուց ու բավականին գործնական հմտություններ ձեռքբերելուց հետո արդեն կայացած ռազմական բժշկի նկրտումները ուղղվում են դեպի քաղաքացիական առողջապահության սեկտոր:

Այնուամենայնիվ, ռազմաբժշկական մասնագետը այսօր էլ մարտական պատրաստության բժշկական ապահովման ու անձնակազմի բուժկանխարգելիչ աշխատանքի պատասխանատու կազմակերպիչն է և անհրաժեշտ օղակը: Ռազմական բժիշկը ոչ միայն ամենամարդասիրական մասնագիտություններից մեկի ներկայացուցիչն է, որն ապահովում է *ոգու և մարմնի կայտառությունը*, այլև՝ զինվորական կոլեկտիվի նշանակալի կարևորությամբ դերակատար:

Ռազմաբժշկական չափազրման հետազոտությունները պայմանավորված են նաև նրանով, որ բժիշկն ունի ազդեցություն խնամատուի (պացիենտի) նկատմամբ: Այն արտահայտվում է մարդու հոգեբանության և մարմնի ֆիզիկական միջամտությամբ, որոնք իրենց հերթին ներառում են բժշկի աշխարհայացքին հատուկ մարդասիրական պահանջներ: Բացի այդ, բժշկի մասնագիտական գործունեությունը կապված է մի շարք աշխարհայացքային բաղադրիչների՝ կյանքի ու մահի բարոյամարդասիրական իմաստավորման, մարդկային մարմնի օրգանների և հյուսվածքների փոխպատվաստման, առողջության ու հիվանդության սահմանների որոշման, տեսական նորմերի և գործնական պաթոլոգիայի (ախտաբանության) հետ: Բարձրացել են պահանջները ռազմական բժշկի աշխարհայացքի մասնագիտական բովանդակության նկատմամբ, որոնք կապված են անհրաժեշտ գիտելիքների ընդլայնման, ռազմաբժշկական տեսության կատարելագործման, բժշկական տեխնոլոգիաների նոր հնարավորությունների հետ: Հատկանշական է բժշկի դերի բարձրացումը զինծառայության բժշկական ապահովման գործում՝ որպես հատուկ ուշադրության արժանի պետական գործունեության տեսակի:

Աշխարհում տեղի ունեցող սոցիալ-քաղաքական փոփոխությունների, գիտության դինամիկ զարգացման արդյունքում,

այդ թվում՝ նաև բժշկության մեջ, աշխարհայացական ժամանակակից սկզբունքների, իդեալների, արժեքների որոնման և հիմնավորման կարիք է զգացվում: Մասնագիտական կրթահամալիրների բազմազանության, քաղաքականության տարբեր ուղղվածությունների պայմաններում դեռ բացակայում են բժշկի աշխարհայացքի ուսումնասիրման ժամանակակից մեթոդոլոգիայի լիարժեք հիմնավորումները:

Բժշկության սոցիալականացումը ու մարդասիրությունը հանգեցնում են բազմաթիվ բանավեճերի, որոնք կենտրոնացված են բիոէթիկայի կարգավիճակի խնդիրների, բժշկի և հիվանդների փոխհարաբերությունների հարցերի ու դրանց գիտական տարբեր մեկնաբանությունների, մոդելների շրջանակներում [2]: Առողջապահության համակարգերի ու տարբեր սոցիոմշակութային համատեքստերում կենսաէթիկան, էթիկայի և կենսաէթիկայի փոխադարձ կապը մանրամասն հետազոտությունների կարիք են զգում [4]:

Ռազմական բժիշկ-անձի աշխարհայացքի վերլուծության ժամանակակից մեթոդաբանությունը ներառում է փիլիսոփայական, բնագիտական, կրոնաարժեքատական, կենսաէթիկական, անձ-մարդաբանական և սոցիոմշակութային մոտեցումների միասնությունը, համաքաղաքացիական և ռազմաարհեստավարժ տարրերի տեսական ու առօրյա-գործնական մակարդակների համադրությունը: Որպես երիտասարդ մասնագետ-բժիշկների աշխարհայացքի ձևավորման գործընթացի հետազոտության մեթոդաբանություն՝ նրա զարգացման և օբյեկտիվացման օրինաչափությունները պրակտիկ բժիշկների մոտ լրացվում է սկսած կուրսանտների ու ռազմաբժշկական բուհերի ուսանողների աշխարհայացքի ձևավորման հատկությունների պարզաբանումից և վերջացրած խաղաղ ժամանակաշրջանում և մարտական պայմաններում մասնագիտական զարգացման ընթացակարգերով [5]:

Ռազմական բժշկի աշխարհայացքի բնագիտական, մարդասիրական և անհատական-անձնական տարրերի բովանդակության ու փոխկապվածության յուրահատկությունը կայանում է նրա ինտեգրման մեջ, որի հիմքն են բարոյական, ռազմական և բժշկական հատուկ գիտելիքները, արժեքները, նորմերն ու սկզբունքները, հետաքրքրություններն ու համոզմունքները, որոնցում հիվանդի առողջության վիճակի նկատմամբ գլխավորապես հանդես են գալիս մարդասիրությունը, բարձր գիտակցվածությամբ մասնագիտական պատասխանատվությունը:

Բնագիտական, մարդասիրական-հոգեբանական տարրերի փոխկապվածությունը բժշկի աշխարհայացքում հայտնաբերվում է

նան գիտելիքների յուրացման և ինտեգրման գործընթացում, տեղեկատվական, ակտիվ-գործառնական, կազմակերպչական-մեթոդական կապերի և գնահատման գործողությունների մեջ: Ռազմական բժշկի աշխարհայացքի գործառնական հատկությունը դրսևորվում է բժշկական տեսության և պրակտիկայի միջառարկայական բնույթով, բժշկի անձի ինտեգրման հատկությունների և մարդասիրության առավել արտահայտման աստիճանով, էքստրեմալ պայմաններում բժշկությունով, զինվորական կոլեկտիվում սոցիալական կարգավիճակով պայմանավորված առաջնային դերով:

Ապագա ռազմական բժիշկների աշխարհայացքի զարգացման և ձևավորման տեսաբանական-մեթոդաբանական հիմքերի ժամանակակից բովանդակությունը իրենից ներկայացնում է համակարգ, որը ներառում է աշխարհայացքային պատրաստության սուբյեկտների և օբյեկտների ամբողջությունը, կուրսանտների և ուսանողների աշխարհայացքային պատրաստության գործառույթները, նպատակները, սկզբունքները, միջոցները, ձևերը, մեթոդները, առաջնային ուղղությունները և աշխարհայացքի գնահատման չափանիշները:

Ռազմաբժշկական ուսումնական հաստատության կուրսանտների և ուսանողների աշխարհայացքի ձևավորման հիմքում դրված են ավանդական սկզբունքները՝ համակարգվածության, ամբողջականության, կառուցվածքայնության, ընթացակարգության, բնաշրջության, պատճառաբանական, կենսաէթիկական, անհատական-հոգեբանական, բարոյական և ռազմական գործին վերաբերող նորմերի միասնության սկզբունքները, բժշկական նոր գիտելիքների առավել մարդասիրական օգտագործման մոտեցումը և այլն:

Ապագա բժիշկների աշխարհայացքային մշակույթի զարգացումն իրականացվում է կրթության բարեփոխումների առաջնային միտումների ազդեցության ներքո՝ հիմնահաստատման, ինտեգրման, մարդասիրության, տեղեկատվության ու բնապաշտպանվածության և ժամանակակից բժշկության զարգացման առաջնային ուղղություններով:

Բժշկի աշխարհայացքի օբյեկտիվացման արդյունավետության սոցիալ-մասնագիտական գնահատականը իրագործվում է մի շարք չափանիշներով: Ռազմատնտեսական չափանիշը ցույց է տալիս բժիշկների աշխարհայացքի օբյեկտիվացման տնտեսական արդյունավետության աստիճանը՝ խաղաղ պայմաններում և պատերազմի ժամանակ զինված ուժերի բժշկական ապահովության համակարգում: Գիտատեխնիկական չափանիշը բնութագրում է բժշկի աշխարհայացքի փոխկապվածությունը գիտության հիմնական դրույթների և պահանջների հետ ընդհանրապես և, մասնավորապես, ռազմաբժշկական տեսության ու պրակտիկայի հետ: Հաջորդ չափանիշը ցույց

է տալիս զինձառայողների առողջության ապահովվածության որակը, որը հիմնականում կապված է բժիշկների բուժկանխարգելիչ գործունեության արդյունքների հետ: Աշխարհայացքի վերափոխման բարոյաէթիկական չափանիշը մասնագիտական գործունեության մեջ բնութագրում է վերջինիս համապատասխանությամբ բարոյական սկզբունքներին և նորմերին, բժշկական հանրության դրույթներին, կենսաէթիկայի պահանջներին [1]:

Խղճի ազատությունը ռազմական բժշկի աշխարհայացքում դրսևորվում է նրանում, որ կրոնական, կրոնա-քննադատական կամ աթեիստական ուղղվածությունը ռազմական բժիշկների աշխարհայացքում ձևավորվում և գործում է մասնագիտական միտումների ազդեցությամբ՝ ներառելով առանց հետապնդման ու հալածանքի ազատ ընտրության ընդլայնումը մարդու աշխարհայացքային կողմնորոշման մեջ: Այսօր ռազմական բժիշկների խղճի ազատության իրացման վրա որպես հիմնական գործոններ ազդում են բնագիտական ու բժշկական կրթությունը, նաև պետության կողմից իրականացվող զինձառայողների իրավունքների, խղճի ազատության և դավանության հարցերի կարգավորումը: Հավատքը ռազմական բժիշկների մոտ համեմատաբար ցածր է մյուս մասնագիտություններին վերաբերող ցուցանիշներից, ինչը բնութագրվում է էկլեկտիկականությամբ (անսկզբունքայնություն, տարատեսակ հայացքներ) և հատկապես տարածված է երիտասարդ բժիշկների միջավայրում: Բժշկի աշխարհայացքում կրոնական հավատքի և աշխարհիկ բժշկական գիտելիքների փոխկապվածությունը բարդ է ու միմյանց հակասող: Կրոնն ընդունվում է, որպես կանոն, բժիշկների կողմից դրական և բացասական արտահայտումների փոխկապվածությամբ, որոնք ուղղված են բժշկության զարգացմանը, մարդկանց առողջության պահպանմանը, ժողովրդի հոգևոր զարգացմանը: Հնարավոր են նաև բժշկի արհեստավարժությունը կրոնական հավատքով, միստիկայով (առեղծվածով), օկուլտիզմով (հոգեհարցումով) կերպարափոխման դեպքեր:

Ռազմական բժշկի առկա աշխարհայացքի տարրերի գիտական ու արժեքային բովանդակության կողմերից է նրա հայացքների, բարձր նպատակների (իդեալների) և գործնական փորձի արմատավորումը: Բժշկի աշխարհայացքի գործնական հիմնախնդիրն է կենդանի, գործունյա մարդը, որը ցանկանում է պահպանել իր կյանքը, լիարժեք հարաբերությունները մարդկանց ու բնության հետ: Մարդու ֆիզիկական կյանքը հիմնականում կապվում է բժիշկների կողմից կենդանի բնաշրջության (էվոլյուցիայի) գործընթացի, ոչ կրոնական հավատքի հետ: Իսկ հատկապես ռազմական բժիշկների կարևորագույն հասա-

րակական կոնդմնորոշումների համակարգը պետք է կազմեն բարու, արժանապատվության, մասնագիտական պատվի, խղճահարության, մարդու կյանքի պահպանման, ակտիվ շփման, գործունեության մաքրության բարձրագույն նպատակները:

Կյանքի արտահայտումը բժիշկների կողմից մեկնաբանվում է ավանդաբար որպես ֆիզիկաքիմիական օրենքների իրականացում: Ռազմական բժշկի աշխարհայացքում և գործունեության մեջ կյանքը ներկայացվում է մարդու առողջության և օրգանիզմի համակարգի միասնությամբ: Կյանքի իմաստը բժշկի աշխարհայացքում վերլուծվում է արքիոլոգիական, մշակութաբանական, կրոնական, գործառնական-գործնական և այլ տեսակետերով, որոնք արտացոլում են սերտ կապը առողջության, երկարակեցության, կենսակարգի (ապրելակերպի) հետ: Կյանքի իմաստի յուրահատկությունը բժշկի աշխարհայացքում կազմում են բժշկական մասնագիտական տեսակետները: Համամարդկային բարոյական հատկանիշներին ներկայացված պահանջները, կապված մարդու առողջության և կյանքի հետ, բժշկական էթիկան տարբերակում են ինչպես համամարդկային, այնպես էլ այլ մասնագիտությունների արհեստավարժության նորմերից:

Բժշկի աշխարհայացքում մահը մեկնաբանվում է կենսաբանության, բժշկության, հոգեբանության, փիլիսոփայության, կրոնի և գրականության ժամանակակից նվաճումների հիմունքով: Բժշկի համար մահի բժշկակենսաբանական տեսակետը բնութագրվում է հատուկ հատկանիշների ամբողջությամբ [6]: Բժշկական հանրության մեջ ուժ է հավաքում մարդու գեներով մանիպուլյացիայի արգելքի գաղափարը, ակտիվ և լայն տարածում գտած էվտանազիայի անթույլատրելիությունը: Մահացող մարդու հոգեկան կառուցվածքում անմահության փոխհատուցման համար բժիշկները որպես առաջնային տարր օգտագործում են կենսաստեղծագործական, աստվածաբանական և նատուրալիստական ձևերը:

Ռազմական բժշկի աշխարհայացքի էվոյուցիան և նրա օբյեկտիվացումը մասնագիտական գործունեության մեջ տեղի են ունենում երիտասարդ բժշկի պատրաստման փուլերի և նրա մասնագիտական կյանքի ուղու՝ բժշկական պրակտիկայի, ծառայության պայմանների, սոցիալական շրջապատի և սուբյեկտիվ հատկանիշների հարաբերակցությամբ:

Բժշկի աշխարհայացքի բովանդակության օբյեկտիվացումը իրականացվում է կյանքի տարբեր բովանդակությամբ աշխարհայացքային փուլերի գործընթացներում և արտահայտվում է նրա գիտամանկավարժական, կլինիկական, հասարակական գործունեության մեջ [3]:

Պատերազմի պայմաններում էլ ավելի վառ է արտահայտվում ռազմական բժիշկների աշխարհայացքի օբյեկտիվացումը բուժկանխարգելիչ և գիտական-տեսական աշխատանքներում: Հայաստանի Հանրապետության համար, Արցախյան պատերազմի փորձից ելնելով, ռազմական բժիշկների արհեստավարժության շնորհիվ վիրավորների ու հիվանդների բուժման բարձր արդյունավետություն է գրանցվել, արագ գործելու ունակությունը պատերազմի պայմաններում՝ նրանց վառ արտահայտված գիտամարդասիրական աշխարհայացքի շնորհիվ: Դրանով իսկ ռազմական բժիշկների գիտահետազոտական գործունեությունը մարտական գործողությունների ժամանակ ձեռք է բերում էլ ավելի արտահայտված ռազմամասնագիտական ուղղվածություն, շարժունակություն, բուժական-գործնական արդյունավետության ճշգրիտ կողմնորոշում: Պատերազմական ժամանակի բուժական գործունեությունը կենտրոնացվում էր արդյունավետ եղանակների ու միջոցների որոնմանը, զինձառայողներին բուժօգնություն ցուցաբերելու մեթոդների նորագույն գիտական բացահայտումների հիման վրա՝ հաշվի առնելով թշնամու մոտ գտնվող մարտական խոցման միջոցների կատարելագործման տեմպերը:

Այսպիսով, աշխարհայացքային կայունությունը կարևորագույն նախապայման է ռազմական բժիշկների կողմից խաղաղ պայմաններում և մարտական իրավիճակում յուրահատուկ արգելքների հաղթահարման համար: Արդյունքում բարձրանում են պահանջները բժշկի բարոյական կերպարի նկատմամբ, իրավական տեսակետից ընթանում է բժշկի և հիվանդի փոխհարաբերությունների մանրամասնումը, մեծանում է նաև քաղաքացիական առողջապահության համակարգի դերը ռազմական ոլորտի բուժկենսաբանական խնդիրների լուծման ոլորտում:

Ռազմական բժիշկ-անձի աշխարհայացքի հիմնավորված վերլուծության հիման վրա նպատակահարմար է ընդգծել առավել արդիական ու նշանակալի հետևյալ ասպեկտները. հասարակության հոգևոր կյանքի ազդեցությունը բժշկի աշխարհայացքի վրա, աշխարհայացքը որպես բժշկի հոգևոր աշխարհի հիմք, բարոյական արժեքները բժշկի աշխարհայացքում, բժշկի աշխարհայացքի համակարգում բարոյական արժեքները, բժշկի հայրենասիրությունը որպես հոգևոր արժեք, կրոնաբարոյական գործոնը բժշկի աշխարհայացքում, ապագա բժշկի հոգևոր-բարոյական դաստիարակության հեռանկարային փորձանմուշի աշխարհայացքային հիմքերը, սոցիալ-բարոյական կողմնորոշումներն ու բարձր նպատակները անձնական աշխարհայացքում:

Ռազմական բժիշկների արժեքային կողմնորոշումների վերլուծությունն առանձնացնում է նաև հասարակական հոգեբանության,

պետական գաղափարախոսության և բժշկի աշխարհայացքի փոխադրեցության բնույթն ու յուրահատկությունը, բժշկի աշխարհայացքի մարդասիրական ուղղվածության կայունության բարձրացման միջոցներն ու ձևերը, մասնագիտացման կայունացման գործընթացում աշխարհայացքի դիալեկտիկայի ձևավորումն ու զարգացումը, ռազմական բժշկի աշխարհայացքի շտկման հատկությունները հասարակական-տնտեսական փոփոխությունների, պաշտպանական բարեփոխումների պայմաններում, գաղափարախոսության և հասարակական հոգեբանության ազդեցության յուրահատկությունը բժշկի աշխարհայացքի վրա՝ խաղաղ պայմաններից դեպի ռազմականը գիտակցական փոխադրումով, վթարների, աղետների հետևանքների վերացման պայմաններում և այլն:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության բնագավառի բժիշկների ժամանակակից գիտամարդասիրական աշխարհայացքի ձևավորման և զարգացման գործում հիմնական շեշտը պետք է դնել ժամանակակից մարդու, ապագա բժշկի հոգևոր զարգացման, մարդասիրության միջազգային նորմերին համապատասխան բարձրագույն մասնագիտական կրթությամբ մասնագետների պատրաստման վրա: Այն պետք է ներառի կենսատեթիկայի բովանդակության ուսումնասիրումը, որի համար անհրաժեշտ է հատկացնել բավականաչափ ուսումնական ժամեր կենսատեթիկայի ուսուցման համար՝ որպես առանձին ուսումնական առարկա ապագա բժիշկների համար: Հարկ է նշել, որ ռազմական բժիշկների աշխարհայացքային բարձր մակարդակի ապահովումն անհնար է առանց ընդհանուր զինվորական անձնակազմի (հրամանատարից մինչև զինվոր) աշխարհայացքի անհրաժեշտ մակարդակ ունենալու նախապայմանի: Հետևաբար, առաջնահերթություն է զինված ուժերում *զինծառայողի աշխարհայացքային կուլտուրայի* զարգացումը, հասարակական-պետական, հրամանատարական պատրաստության պլաններում առանձնակի ուշադրություն դարձնել արդի աշխարհայացքային խնդիրների վերաբերյալ մի շարք հատուկ թեմաների ուսուցմանը՝ որպես մարդու, քաղաքացու և հատուկ տեսակի պետական ծառայություն անցնող մասնագետի կայացման հիմք:

Նպատակահարմար է ռազմաբժշկական ուսումնական հաստատություններում կազմակերպել կենսատեթիկական խնդիրների վերաբերյալ բժիշկների, փիլիսոփաների, իրավագետների, մշակութաբանների, հոգեբանների, կրոնագետների, սոցիոլոգների և այլ մասնագետների մասնակցությամբ սեմինար-պարապմունքներ: Կարիք կլինի նաև պատրաստել ու հրատարակել մեթոդական ձեռնարկներ ռազմական բժիշկների աշխարհայացքային պատրաստության կարևորա-

գույն հարցերի վերաբերյալ՝ ուսուցման, ինքնակրթության, նշանավոր բժիշկների աշխարհայացքային փորձի յուրացման նպատակներով:

Поступила 30.05.12

Оценка мировоззренческого восприятия и направления развития его теории у военного врача

Р.Г. Хачатрян

В статье рассматриваются вопросы формирования мировоззрения военного врача, представлена необходимая методология и способы их изучения, основанные на социальных и философских направлениях. В результате анализа сделаны выводы об обеспечении развития современного гуманитарного уровня мировоззрения военных врачей, направлении усовершенствования целостных стандартов в военно-медицинской учебной и практической повседневной жизни.

Assessment of medical officer's world outlook perception and the direction of development of its theory

R.G. Khachatryan

The article deals with the formation of outlook of the medical officer, the necessity of methodology and ways of its studying based on the social and philosophical aspects. In result of the analysis the conclusions are drawn ensuring development of modern humanitarian level of outlook of medical officers, the directions of improvement of complete standards in a military medical educational and everyday life.

Գրականություն

1. *Доброштан М.В.* Мировоззренческая культура офицерского корпуса России. СПб., 1997.
2. *Козаченко В.И., Петленко В.П., Тихонов М.И.* Социология и мировоззрение врача. СПб., 1992.
3. Мировоззрение как методологическая установка врача. Военно-медицинский журнал, 1989, 11, с. 12.
4. *Михайлова Е.П., Бартко А.Н.* Биомедицинская этика: теория, принципы и проблемы. М., 1995.

5. *Петленко В.П., Козаченко В.И.* Методология военной медицины. СПб., 1992.
6. Современная медицина и православие. М., 1998.

Рецензия
на монографию профессора Г. О. Бакунца
«Эндогенные факторы церебрального инсульта»

Издание в России монографии профессора Бакунца Генри Осиповича «Эндогенные факторы церебрального инсульта» имеет большое значение для неврологов Российской Федерации и других стран СНГ. Г. О. Бакунц – известный ученый, клиницист, который своей активной, многогранной деятельностью заслужил уважение неврологических и других научно-медицинских обществ и в России, и за рубежом. В основу монографии положены результаты многолетних исследований Г. О. Бакунца, в которой автором был представлен принципиально новый подход к изучению патофизиологии и к разработке терапии цереброваскулярных заболеваний с комплексной оценкой нарушений иммунного, липидного и микроциркуляторного гомеостаза с анализом этих показателей. Г. О. Бакунц является одним из первых неврологов, кто стал разрабатывать нейроиммунологические аспекты сосудистых заболеваний мозга, использовать экстракорпоральные методы терапии нарушений мозгового кровообращения, в том числе в условиях нейрореанимации. Большой научный и клинический опыт, который профессор Г. О. Бакунц приобрел, работая в ведущих школах академиков Ю. М. Лопухина, Р. В. Петрова, члена-корреспондента РАМН, профессора А. Я. Кульберга, максимально полно и творчески использован в Армении.

В представленной монографии автор обобщает свой более чем 30-летний опыт работы по изучению одной из самых актуальных вопросов современной медицины – проблемы инсульта. Монография посвящена выявлению многофакторной роли и методов коррекции эндогенных дисфункций организма в формировании и развитии различных форм инсульта. Особый интерес вызывают впервые описанные в неврологической литературе данные о роли и значении *нейроиммуноэндокринной сети* (НИЭС) в динамике развития сложных взаимосвязанных и взаимообусловленных процессов, возникающих при острых нарушениях мозговой дисциркуляции. Автор обоснованно выстраивает интегративную цепь взаимосвязанных дисфункций НИЭС в сочетании с метаболическими нарушениями, начиная с процессов «точечного накопления патологии» и ее последующего развития, что позволяет не только диагностировать основные патогенетические и

патофизиологические процессы, возникающие при инсультах, но и проводить адекватную фармакотерапевтическую коррекцию. В работе НИЭС предстает в виде единой, целостной общерегуляторной системы, связывающей все активные компоненты гомеостаза и создающей целостную картину функционирования организма в условиях развивающегося инсульта. В указанном плане несомненный теоретический и клинический интерес вызывает гипотеза об R-белках (фрагменты клеточных рецепторов) и их роли в оценке состояния гомеостаза при инсульте и полученные практические выходы. Выделяя *общее звено* в формировании расстройств гомеостаза при инсультах, связанное с нарушением клеточной рецепции или ее извращением, автор показал, что именно вокруг нее разворачиваются сложные патофизиологические процессы, ведущие к сдвигам биологического равновесия в организме и приводящие, в конечном итоге, к возникновению различных форм нарушений мозгового кровообращения.

Наряду с этим, большой интерес представляет приведенный автором впервые в клинических условиях многофакторный анализ целого ряда эндогенных параметров, выяснение степени их информативности, установление корреляционных взаимосвязей между ними, выделение наиболее значимых для патологического процесса признаков. Все это придает логическую завершенность этой содержательной работе.

Как совершенно справедливо отмечает в предисловии член-корреспондент РАМН, профессор В. И. Скворцова, одна из ведущих неврологов мирового сообщества по исследованию проблемы инсульта, «наряду с клинико-лабораторными исследованиями автора особо хочется отметить реальные клинические достижения руководимого им Центра ангионеврологии и перспективы развития противоинсультной службы в Армении». Создание медицинского центра «Stroke» и внедрение разработанной автором и описанной в монографии программы превентивной, лечебной и реабилитационной помощи больным с инсультом позволит Армении выйти на ведущие позиции по борьбе с этой значимой медицинской и социальной патологией.

Монографию профессора Г. О. Бакунца следует оценить как фундаментальный труд, вносящий существенный вклад в решение такой актуальной проблемы, как церебральный инсульт, и она может по праву войти в число научных трудов, определяющих перспективы развития современного учения об инсульте.

Медицинская наука Армении НАН РА № 3 2012

Главный невролог Министерства здравоохранения и социального
развития РФ

Председатель правления Всероссийского общества неврологов

Президент Национальной ассоциации по борьбе с инсультом

Заведующий кафедрой неврологии и нейрохирургии

Российского Национально-исследовательского

медицинского университета им. Н. И. Пирогова

Академик РАМН, профессор **Е. И. ГУСЕВ**

Рафаел Паруйрович Стамболцян



На девяностом году ушел из жизни основоположник кардиологической школы в Армении, академик НАН РА, заслуженный деятель науки, лауреат Государственной премии, доктор медицинских наук профессор Рафаел Паруйрович Стамболцян.

Р.П. Стамболцян родился 22 июля 1922 г. в Ереване. В 1940г. он поступил на лечебно-профилактический факультет Ереванского государственного медицинского института, однако с началом Великой Отечественной войны Р.П.Стамболцян прерывает учебу и уходит добровольцем на фронт, участвует в ожесточенных боях в Туапсе и под Новороссийском и в 1943г. вследствие серьезной болезни демобилизуется. После окончания института в 1946г. он поступает клиническим ординатором на кафедру госпитальной терапии ЕрМИ, где под руководством заведующего кафедрой профессора Р.Н.Гянджецяна формируется как врач-терапевт широкого профиля.

В 1948г. Р.П. Стамболцян был направлен в Москву для прохождения переподготовки в больнице им. Боткина, где специализировался в области электрокардиографии. После возвращения в Армению он активно включается в работу по организации курсов для обучения ЭКГ и за короткий срок готовит более ста специалистов в этой области, благодаря чему закладываются прочные основы для развития кардиологии как науки в Армении. В годы создания Института кардиологии им. Л.А.Оганесяна Р.П.Стамболцян организует там на общественных началах соответствующие службы и подготавливает специалистов-кардиологов. В эти же годы Р.П.Стамболцян занимается активной научной работой. Его первые научные труды посвящены проблемам профилактики и лечения бруцеллеза – патологии, широко распространенной в республике. В дальнейшем Р.П.Стамболцян занимается изучением проблемы язвенной болезни желудка, разрабатывает новый метод лечения этой патологии с помощью медикаментозного сна с учетом индивидуальных особенностей ЦНС

больного. Путем экспериментальных и клинических исследований в этом направлении Р.П.Стамболцян разработал и внедрил оригинальный метод лечения язвенной болезни электросном с применением аппарата, созданного в сотрудничестве с ведущими учеными-физиками республики.

В 1952г. Р.П. Стамболцян успешно защитил диссертацию на соискание ученой степени кандидата медицинских наук на тему: «Дифференциальный метод лечения язвенной болезни сном». В том же году он становится ассистентом, а в 1957г. – доцентом кафедры госпитальной терапии ЕрМИ.

Дальнейшая научная деятельность Р.П. Стамболцяна была полностью посвящена вопросам кардиологии. Разработанный им метод биполярной кардиографии нашел широкое применение на практике при лечении болезней, связанных с сердечной недостаточностью. Результаты его научных и клинических исследований в этот период легли в основу его докторской диссертации, которую он с успехом защитил в 1962г.

В 1963г. Р.П.Стамболцян приступил к организации кафедры пропедевтики внутренних болезней для педиатрического, санитарного и стоматологического факультетов ЕрМИ на базе Городской больницы №4. Там же под руководством проф. Р.П. Стамболцяна впервые в Армении было организовано специализированное отделение интенсивного наблюдения больных с острым инфарктом миокарда.

В 1965г. Р.П. Стамболцян предлагает разработанный им совершенно новый интегральный метод количественного анализа электрокардиограммы, который значительно повышает чувствительность и информативность ЭКГ и раскрывает новые возможности в изучении сердечных патологий. Этот метод позволяет проводить диагностику ишемической болезни сердца в самой начальной стадии, тогда как традиционные методы анализа ЭКГ не дают этой возможности. Кроме того, метод позволяет количественно отображать патологические сдвиги ЭКГ, благодаря чему становится возможным проследить течение болезни в динамике.

В 1967г. проф. Р.П. Стамболцяну было присуждено звание заслуженного деятеля науки, а в 1971г. он был избран членом-корреспондентом АН Арм ССР.

Весьма широк диапазон научно-организационной и преподавательской деятельности Р.П. Стамболцяна в эти годы – от должности ректора Ереванского государственного медицинского института до основателя первого в Армении кардиологического

клинического отделения в Республиканской клинической больнице. С 1975 по 1987гг. он заведует кафедрой терапии для субординаторов, позднее переименованной в кафедру внутренних болезней N2.

С 1987г. Р.П.Стамболцян руководил авторской группой по разработке интегрального метода количественного анализа ЭКГ, претворяя в жизнь свою программу создания новых диагностических электронных приборов с использованием компьютерной техники.

В 1994г. проф. Р.П.Стамболцян был избран действительным членом НАН РА. Академик Р.П. Стамболцян внес огромный вклад в развитие современной медицины в Армении. Под его руководством сформировался ряд направлений научной и практической кардиологии в Армении.

С 1990 по 1995гг. академик Р.П.Стамболцян являлся главным редактором журнала «Экспериментальная и клиническая медицина АН РА».

Его перу принадлежат 3 монографии, 4 учебника и 168 научных публикаций. Под его руководством было защищено 23 кандидатских и 2 докторских диссертаций. Академик Р.П.Стамболцян является автором 7 изобретений.

Правительство высоко оценило заслуги академика Р.П.Стамболцяна перед родиной и его вклад в отечественную науку, наградив его орденами Знак Почета, Великой Отечественной войны II степени и многочисленными медалями.

Светлая память об ученом, враче, человеке, Рафаеле Паруйровиче Стамболцяне, навсегда сохранится в сердцах его учеников, друзей, коллег.

*Президиум Национальной академии наук РА
Редакционная коллегия журнала
“Медицинская наука Армении”*

Բովանդակություն

Ակնարկներ

Վարդանյան Գ.Ջ., Հակոբյան Ռ.Ս.
 Վահանագեղձի հիվանդությունների գերձայնային ախտորոշումը վերարտադրողական տարիքի կանանց մոտ3

Ջնդրյան Ջ.Տ., Մարտիրոսյան Ն.Հ.
 ԻԼ-6-ի ախտաձագումնային դերը պարբերական հիվանդության ժամանակ տենդային ռեակցիայի ձևավորման մեջ15

Փորձարարական և կանխարգելիչ բժշկություն

Ալեքսանյան Մ.Գ., Միմոնյան Գ.Մ., Միմոնյան Ռ.Մ., Առաքելյան Լ.Ն., Ալեքսանյան Ս.Ս., Միմոնյան Մ.Ա.
 Սպիտակ առնետներին ներարկված սուպրոլի հակաուռուցքային և հակա-սթրեսային ազդեցությունը սարկոմա - 45-ի ժամանակ23

Մարգարյան Վ.Ռ., Նահապետյան Խ.Հ., Հարությունյան Ռ.Ա., Վարդանյան Վ.Տ., Նիկողոսյան Ա.Գ., Բարսիսանյան Ա.Ս., Մարգարյան Ռ.Շ.
 Բուսապատրաստուկ Ստեվիայի և մագնիսացված ջրի համեմատական ազդեցությունն առնետների ֆիզիոլոգիական վիճակի վրա հուզումնաձայնային սթրեսի ձևավորման ընթացքում36

Մելքումյան Կ.Վ.
 Բնականոն և թրթռահարված առնետների ենթատեսաթմբի վերտեսողական կորիզի ակտիվության ուսումնասիրությունը ստորին անդաստակային կորիզի էլեկտրական խթանման պայմաններում44

Մինասյան Ա.Վ.
 Պարաթիրեոիդ հորմոնի ազդեցությունը առնետների մեկուսացված աորտայի կծկողական ակտիվության վրա52

Գրեկյան Ն.Օ.
 Օքսազիլինի որոշումը դեղանյութերում տարբեր դասի հիմնային ներկայությունը էքստրակցիոն-արտոբրեքիոմետրիկ եղանակով59

Հովհաննիսյան Վ.Ս.
 Ջրաչափերը (Heteroptera) որպես Հայաստանի արյունածուծ մոծակների թվաքանակի կարգավորիչներ65

Կլինիկական բժշկություն

Կարապետյան Ա.Գ.
 ՉԱԷԿ-ի վթարի հետևանքների վերացմանը մասնակցած անձանց մոտ բորբոքային պրոցեսների գնահատման վերաբերյալ71

Կտիկյան Տ.Գ., Հովհաննիսյան Ա.Ս., Խաչատրյան Ա.Յ., Գինոսյան Ա.Վ., Վարդանյան Ս.Օ., Մանուկյան Ն.Վ.
 Eleutherococcus senticosus-ի կուրսային կիրառման ազդեցությունը մարզիկների արյան կենսաքիմիական, արյունաբանական և հորմոնալ ցուցանիշների վրա79

Հակոբյան Գ.Ռ.
 Սեպսիսի դասակարգման ախտորոշիչ տեղեկատվականության համեմատությունը87

Հարությունյան Ա.Գ., Ազատյան Կ.Գ., Ներսեսյան Ս.Ա., Կոնստյան Հ.Ն.

Թիրեոիդային հիվանդությունների սպեկտրը հղի կանանց մոտ97
Մինասյան Ս.Ս., Գևորգյան Է.Ս., Աբրահամյան Հ.Տ., Աղամյան Մ.Բ.
 Դինամիկական ֆիզիկական ծանրաբեռնվածության պայմաններում ուսանող-
 ների սրտի ռիթմի փոփոխությունների մաթեմատիկական վերլուծությունը103
Բարինով Ե.Խ., Ռոմոդանովսկի Պ.Օ., Բիշարյան Ս.Ս.
 Քաղաքացիական գործերով դատաբժշկական փորձաքննության եզրակացու-
 թյունների գնահատում: Իրավական հարցեր112
Խաչատրյան Ռ. Գ.
 Ռազմական բժշկի աշխարհայացքային ընկալումների գնահատումը և դրանց
 զարգացման տեսության ուղղությունները117
Գուսև Ե.Բ.
 Գրախոսական պրոֆեսոր Գ.Հ. Բակունցի ՏՊՀ-ի հիսուսյան ինստիտուտի էնդոկրին
 գործոնները: մենագրության վերաբերյալ126
 Ռաֆայել Պարոյրի Ստամբուլյան128

Содержание

Обзоры

Варданян Г.Дж., Акопян Р.А.
 Ультразвуковая диагностика заболеваний щитовидной железы у женщин репро-
 дуктивного возраста3
Джидоян З.Т., Мартиросян Н.Г.
 Патогенетическое значение ИЛ-6 в лихорадочной реакции при периодической
 болезни15

Экспериментальная и профилактическая медицина

*Алексян М.К., Симонян Г.М., Симонян Р.М., Аракелян Л.Н., Алексян С.С., Си-
 монян М.А.*
 Противоопухолевый и антистрессорный эффект супрола, введенного белым крысам
 при саркоме-4523
*Саркисян В.Р., Нагапетян Х.О., Арутюнян Р.А., Варданян В.Т., Никогосян А.Г., Баба-
 ханян А.М., Саркисян Р.Ш.*
 Сравнительная оценка влияния растительного препарата Стевия и омагниченной
 воды на физиологическое состояние крыс в процессе формирования эмоционально-
 звукового стресса36
Мелкумян К.В.
 Изучение активности нейронов гипоталамического супраоптического ядра при
 электрической стимуляции нижнего вестибулярного ядра в норме и после
 вибрационного воздействия у крыс
44
Минасян А.В.
 Влияние паратиреоидного гормона на сократительную способность изолированной
 аорты крыс52
Геокчян Н. О.

Определение оксациллина в лекарственных препаратах основными красителями различных классов экстракционно-абсорбциометрическим методом59

Оганесян В.С.

Водные клопы (Heteroptera) – регуляторы численности кровососущих комаров Армении65

Клиническая медицина

Карапетян А.Г.

К оценке воспалительного процесса у ликвидаторов последствий аварии на Чернобыльской АЭС71

Ктикян Т.Г., Оганесян А.С., Хачатрян А.Ж., Гиносян А.В., Варданян С.О., Манукян Н.В.

Влияние курсового приема *Eleutherococcus senticosus* на биохимические, гематологические и гормональные показатели крови спортсменов79

Акопян Г.Р.

Сравнение диагностической информативности современных классификаций сепсиса 87

Арутюнян А.Г., Азатян К.Г., Нерсисян С.А., Крнатян Р.Н.

Спектр тиреоидных заболеваний у беременных женщин97

Минасян С.М., Геворкян Э.С., Абраамян Э.Т., Адамян Ц.И.

Математический анализ изменений сердечного ритма студентов при динамической физической нагрузке103

Баринев Е.Х., Ромодановский П.О., Бишарян М.С.

Оценка выводов судебно-медицинской экспертизы по гражданским делам. Правовые вопросы112

Хачатрян Р.Г.

Оценка мировоззренческого восприятия и направления развития его теории у военного врача117

Гусев Е. И.

Рецензия на монографию проф. Г. О. Бакунца “Эндогенные факторы церебрального инсульта”126

Рафаел Паруйрович Стамболцян128

Contents

Reviews

Vardanyan G. Y., Hakobyan R. A.

Ultrasound diagnostics of thyroid diseases in women of reproductive age3

Jndoyan Z.T., Martirosyan N.H.

The pathogenetic role of IL-6 in fever reaction in familial Mediterranean fever15

Experimental and Preventive Medicine

Alexanyan M.K., Simonyan G.M., Simonyan R.M., Arakelyan L.N., Alexanyan S.S., Simonyan M.A.

Antitumor and antistressor effects of suprol injected to white rats at sarcoma-45 23

Sargsyan V.R., Nahapetyan Kh.H., Harutyunyan R.A., Vardanyan V.T., Nikogosyan A.G., Babakhanyan F.M., Sargsyan R.Sh.

Comparative estimation of influence of the vegetative preparation Stevia and magnetized water on the physiological state of rats at formation of emotional-sound stress 36

Melkumyan K.V.

The study of neuronal activity of the hypothalamic supraoptic nucleus with electrical stimulation of the spinal vestibular nucleus in norm and after vibration in rats44

Minasyan A.V.

The parathyroid hormone influence on the contractile activity of the isolated rat aorta52

Geokchyan N.O.

Quantification of oxacillin in medicaments with basic dyes of various classes by extractive absorbtometric methods 59

Hovhannisyan V.S.

Water skaters (Heteroptera) – regulators of the bloodsucking mosquitoes' number in Armenia65

Clinical Medicine

Karapetyan A.G.

Evaluation of the inflammatory processes in the liquidators of the consequences at the Chernobyl NPP71

Ktikyan T.G., Hovhannisyan A.S., Khachatryan A.J., Ginosyan A.V., Vardanyan S.O., Manukyan N.V.

The influence of Eleutherococcus senticosus coursework treatment on biochemical, hematological and hormonal parameters in athletes79

Hakobyan G.R.

Comparison of the diagnostic informative value of modern sepsis classifications 87

Harutyunyan A.G., Azatyan A.G., Nersesyan S.A., Krnatyan H.N.

Spectrum of thyroid diseases in pregnant women97

Minasyan S.M., Gevorkyan E.S., Abrahamyan H.T., Adamyan Ts.I.

Mathematical analysis of students' heart rate changes in conditions of dynamic physical tension103

<i>Barinov Ye. Kh., Romodanovski P.O., Bisharyan M.S.</i> Evaluation of the forensic medical examination findings in civil cases. Legal issues	112
<i>Khachatryan R.G.</i> Assessment of medical officer's world outlook perception and the direction of development of its theory	117
<i>Gusev Ye. I.</i> Expert's opinion on professor G.H. Bakunts' monography "Endogeneous factors of cerebral stroke"	126
Rafael P. Stamboltsian	128